ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1958 Общественные науки

Լ. Քալանյան

«ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՄՆԱՑՈՒԿՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարքսիստական փիլիսոփայությունը հաստատում է, որ մարդկանց սովորույթներն ու սովորությունները, հասարակության անդամների բարոյական ու կենցաղային նորմաները, ընտանեկան, հասարակական և ամեն տեսակ այլ փոխհարաբերությունները վերջին հաշվով պայմանավորվում են տվյալ հասարակարգի տնտեսական կառուցվածքով և ձևափոխվում են մարդկանց նյութական փոխհարաբերությունների փոփոխություններին համապատասխան։ «Նյութական կյանքի արտադրման եղանակը,— գրում է Մարքսը,— պայմանավորում է կյանքի սոցիալական, քաղաքական ու հոգեկան պրոցեսներն ընդհանրապես»[1]։

Սովետական մարդկանց բարոյական կերպարը, նրանց բարոյական սկզբունքներն ու վարքի նորմաները պայմանավորված են հասարակական նոր կեցությամբ, տնտեսական նոր հարաբերություններով։

Ո՞րն է սովետական մարդկանց սոցիալիստական գիտակցության ձևավորման նյութական հիմքը։ Դա սոցիալիստական արտադրական հարաբերություններն են՝ արտադրության միջոցների հանրային սեփականությունը, մարդու կողմից մարդու շահագործման բացակայությունը, շահագործումից ազատ մարդկանց համագործակցությունը՝ նյութական ու հոգևոր բարիքների արտադրության պրոցեսում։ Այս միջավայրում է աճել սովետական մարդը, բյուրեղացել են նրա բնավորության գծերը, որոնք արտահայտվում են իր հայրենիքի նկատմամբ անսահման նվիրվածության, Կոմունիստական պարտիայի նկատմամբ ունեցած ջերմ սիրո և ամբողջ հասարակության օգտին անձնվիրաբար աշխատելու մեջ։

Նոր մարդու ծնունդը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմական կարևորագույն արդյունքն է։ Սոցիալիզմի պայմաններում հնարավոր դարձավ նոր հասարակության գիտակցական կառուցումը։ Պատմության մեջ դեռևս երբեք չի եղել այնպիսի դրություն, երբ մարդիկ տոգորվելով միասնական գաղափարով, կարողանային կառուցել իրենց ապագան, իրենց «իսկական ազատության թագավորությունը», ընդհանուր բարեկեցության և երջանկության թագավորությունը։

Նոր տնտեսական հարաբերությունների հիման վրա մարդկանց վերադաստիարակումը ինքնահոսով տեղի չի ունենում։ Այդ պրոցեսում մեծ դեր է պատկանում սուբյեկտիվ գործոնին։ Մարդկանց կոմունիստական դաստիարակությունը միշտ էլ եղել է մեր պարտիայի ուշադրության կենտրոնում։ Սովետական մարդու բարձր գիտակցությունը մասսաների մեջ կատարվող ամենօրյա իդեոլոգիական աշխատանքի արդյունք է։

---

[1] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս. *Ընտիր երկեր*, հատ. I, էջ 427։

Սակայն չի կարելի ասել, որ փոխվել է բոլոր սովետական մարդկանց գիտակցությունը։ ՍՄԿՊ XX համագումարին Կենտկոմի տված զեկույցման մեջ Ն. Ս. Խրուշչովը ասել է. «Սխալ կլիներ կարծել, որ արդեն վերջ է տրված կապիտալիզմի մնացուկներին մարդկանց գիտակցության մեջ։ Ցավոք սրտի, մեր հիանալի, աշխատասեր սովետական ընտանիքում դեռևս հանդիպում են այնպիսի մարդիկ, որոնք չեն մասնակցում արտադրական աշխատանքին, օգտակար աշխատանք չեն կատարում ո՛չ ընտանիքում, ո՛չ էլ հասարակության մեջ։ Անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքը մասսաների կոմունիստական դաստիարակության և մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացուկները հաղթահարելու ուղղությամբ»։

Ո՞րն է սովետական մարդկանց մի մասի գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացուկների էությունը և մենք ինչպես պետք է բնորոշենք այդ հասկացությունը։

Այդ հասկացության տակ մենք, ամենից առաջ, պատկերացնում ենք այնպիսի արարքներ կամ գիտակցության ձևեր, որոնք ծագել են անտագոնիստական ֆորմացիաներում տնտեսական հակասությունների և դասակարգային պայքարի հետևանքով։

Վ. Ի. Լենինը բազմիցս մատնանշել է, որ մարդկանց վերադաստիարակումը, նրանց հոգեբանության, սովորությունների, տրադիցիաների փոփոխումը, որպիսիք նրանք ձեռք են բերել շահագործողական ֆորմացիաներում, շատ ժամանակ կպահանջի։ Վ. Ի. Լենինը գրում է. «Միլիոնների և տասնյակ միլիոնների սովորության ուժը ամենասարսափելի ուժն է»[1]։

Մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը չի կարելի դիտել որպես վայրկյանական ակտ կամ կարճատև մի պրոցես։ Հանդիսանալով անտագոնիստական ֆորմացիաների արդյունքը, մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացուկներն անհաշտելի հակասության մեջ են կոմունիստական բարոյականության և սոցիալիստական կեցության նորմաների հետ։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմը մերժում, ժխտում է բուրժուական նացիոնալիզմը։ Առաջինը ժողովուրդների բարեկամության ու իրավահավասարության իդեոլոգիան է, իսկ երկրորդը՝ թշնամանքի և ստրկացման իդեոլոգիան։ Սոցիալիստական դեմոկրատիզմը չի կարող հանդուրժել բյուրոկրատիզմ։ Նրանք բացասում են միմյանց։ Մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի բոլոր մնացուկները հակասում են կոմունիստական նոր աշխարհըմբռնմանը, սոցիալիստական նոր կեցությանը։

Մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացուկների հակասության մյուս արտահայտություններից մեկն այն է, որ դրանք ռեալ արգելք են սովետական մարդկանց կոմունիստական դաստիարակության գործում, նոր կյանքի կառուցման գործում։ Չի կարելի լինել կոմունիստական հասարակության ակտիվ կառուցող և միաժամանակ կրել մասնավոր-սեփականատիրական հոգեբանության գծերը։ Չի՛ կարելի գտնվել սոցիալիստական շինարարության առաջավոր դիրքերում, չսիրելով աշխատանքը, չպահպանելով հանրային սեփականությունը։ Չի՛ կարելի լինել լավ ծառայող, միաժամանակ լինելով բյուրոկրատ։ Չի՛ կարելի ստեղծել առողջ, սոցիալիստական ընտանիք և երեխաներին դաստիարակել կոմունիզմի ոգով, երբ ինքդ վարակված ես

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 31, էջ 35։

ամորալիզմով, էգոիզմով, կրոնական նախապաշարմունքներով և այլն։ Այսպիսով, մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացուկները անհամատեղելի են սովետական մարդկանց սոցիալիստական նոր կեցության հետ։

Եվ, վերջապես, մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացուկների էությունը հասկանալու համար անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել այդ երևույթների հասարակական կողմի վրա։ Կապիտալիզմի մնացուկների կոնկրետ կրողների դեմ ամենօրյա, հետևողական պայքարի բացակայությունը կարող է հասարակական մեծ չարիքի պատճառ դառնալ։ Այնպիսի երևույթներ, ինչպիսիք են նացիոնալիզմը, բյուրոկրատիզմը, կաշառակերությունը, խուլիգանությունը, խաբեբայությունը և այլ հակաբարոյական արարքները, որոշակի պայմաններում կարող են հասարակական մեծ վտանգ դառնալ։ Անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ սոցիալական երևույթները մի ժամանակ բուրժուազիայի ձեռքին վտանգավոր զենք են եղել նոր հասարակարգի դեմ մղվող պայքարում։ Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում Վ. Ի. Լենինը այդ երևույթները, կարգապահությունը խախտելու հետ մեկտեղ, ուղղակի անվանում էր դասակարգային պայքարի ձևեր։ Համաշխարհային պրոլետարիատի առաջնորդը կրքոտ կերպով պահանջում էր ամենախիստ հսկողություն ու վերահսկողություն հաստատել հարուստների, խաբեբաների, ձրիակերների, խուլիգանների նկատմամբ։ «Հարուստներն ու խաբեբաները միևնույն մեդալի երկու կողմերն են,— ասում է Լենինը,— դրանք մակարույծների երկու գլխավոր կատեգորիաներն են, որոնց սնել է կապիտալիզմը, դրանք սոցիալիզմի գլխավոր թշնամիներն են, այդ թշնամիներին պետք է ամբողջ բնակչության հատուկ հսկողության տակ առնել, նրանց հետ պետք է անխնա դատաստան տեսնել, հենց որ նրանք ամենափոքր չափով խախտեն սոցիալիստական հասարակության կանոնները ու օրենքները։ Այդ տեսակետից ամեն մի թուլություն, ամեն մի վարանում, ամեն մի սենտիմենտալ վերաբերմունք մեծագույն ոճրագործություն կլիներ սոցիալիզմի հանդեպ»[1]։ Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու շրջանում նացիոնալիզմը, բյուրոկրատիզմը, աշխատանքային կարգապահության խախտումը և նման երևույթները դադարում են դասակարգային պայքարի արտահայտություններ լինելուց։ Սոցիալիզմը ոչնչացնում է անտագոնիստական հակասություններն ու դասակարգային պայքարը։ Բայց չի կարելի չնկատել, որ ամտեսվելու դեպքում այդ բացասական երևույթները կարող են դառնալ հասարակական մեծ չարիք։

Կապիտալիզմի մնացուկների դրսևորումը մարդկանց գիտակցության մեջ մեր պայմաններում չի կարելի դասակարգային պայքարի ձև համարել։ Մեր ժողովրդի բարոյա-քաղաքական միասնության, սովետական հայրենասիրության և ժողովուրդների բարեկամության առկայության պայմաններում անհեթեթություն կլիներ խոսել դասակարգային պայքարը շարունակվելու մասին։ Բայց գործնականում կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ օբյեկտիվորեն թշնամի են սոցիալիստական համակեցության հիմնական կանոններին։ Անհրաժեշտ է հիշել, որ դրսից սոցիալիզմի թշնամիների մղած ագիտացիան ամենից առաջ նկատի ունի բուրժուական նացիոնալիզմի, կոսմոպոլիտիզմի թույնով, մասնավոր-սեփականատիրական հոգեբանությամբ և

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 26, էջ 500—501։

բուրժուական աշխարհի այլ մնացորդներով վարակված մարդկանց։ Քիչ չեն այն դեպքերը, երբ կապիտալիզմի այդ մնացուկներով վարակված մարդիկ կույր գործիք են դառնում թշնամական գործակալության ձեռքում, ժողովրդի մեջ տարածելով զրպարտություն և սուտ։ Ահա ինչու անհրաժեշտ է, այլ բացասական մոմենտների հետ միասին, ցույց տալ նաև մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացուկների առկայության դասակարգային վտանգավորությունը։

Այսպիսով, մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացուկների հասկացությունը սահմանելու համար պետք է հաշվի առնել երեք մոմենտ։

1. Մարդկանց գիտակցության մեջ եղած հակահասարակական մնացուկներն՝ անցյալ անտագոնիստական ֆորմացիաների արդյունք են։

2. Այդ մնացուկները լուրջ արգելակող ուժ են կոմունիստական հասարակարգի կառուցման գործում։

3. Կապիտալիզմի մնացուկները թեև դասակարգային պայքարի ձև չեն, բայց իրենց կոնկրետ դրսևորումների մեջ հակասում են բանվոր դասակարգի շահերին։

Ելնելով այս բոլորից, կարելի է տալ կապիտալիզմի մնացուկների հասկացության հետևյալ սահմանումը. մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկներ են կոչվում անտագոնիստական հասարակությունների բարոյականության, գաղափարների և սովորույթների այն տարրերը, որոնք դեռևս մնում են սոցիալիզմի ժամանակ և խանգարում նրա զարգացմանը։

Անկասկած, մեր առօրյա կյանքում պատահող ամեն մի բացասական կամ անցանկալի արարք չի կարելի դասել մարդկանց գիտակցության մեջ եղած կապիտալիզմի մնացուկների շարքը։ Մարդիկ կարող են մոլորվել, կարող են շեղվել ճիշտ դիրքերից իրենց աշխատանքային կամ այլ գործունեության մեջ, բայց կարող են վարակված չլինել անցյալի մնացուկներով։ Գիտնականը իր գիտական որոնումների ընթացքում կարող է հետևել այս կամ այն սխալ մրտքին կամ էլ հանգել ինչ-որ սխալ հետևությունների, բայց, իհարկե, չի կարելի ամեն դեպքում այս բոլորը դիտել որպես կապիտալիզմի մնացուկներ մարդկանց գիտակցության մեջ։

Իհարկե, չի կարելի այս բոլորը դասել կապիտալիզմի մնացուկների շարքը։ Մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկները նեղ հասկացություն են, որի մեջ մտնում են որոշակի բացասական հատկանիշներ ունեցող մի շարք երևույթներ։

Մեր ժողովուրդը դաստիարակված է կոմունիզմի ոգով, նա քայլ առ քայլ կառուցում է իր լուսավոր ապագան։ Բարձր բարոյականություն, բարձր աշխատասիրություն, գաղափարականություն ու ճշմարտացիություն — ահա այն գծերը, որոնք պետք է բնորոշեն կոմունիստական հասարակության մարդուն։ Այդ ճանապարհին սովետական ժողովուրդը դեն է նետում այն ամենը, ինչ ապրել է իր դարը արգելակ է դարձել։ Այդպիսի արգելակներից մեկը անցյալի մնացուկների առկայությունն է սովետական մարդկանց մի մասի գիտակցության մեջ։ Ահա ինչու այդ մնացուկների դեմ մղվող պայքարը կոմունիստական հասարակության կառուցման պարտադիր պայմաններից մեկն է։